ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ 1915 Թ. ՀՈՒԼԻՍՅԱՆ ԳԱՂԹԻՑ ՀԵՏՈ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայերի առաջին՝ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերյան գաղթից հետո Արևմտյան Հայաստանում ստեղծվել էր մի այնպիսի իրավիճակ, որ զգացվում էր վերաշինության գործի խիստ անհրաժեշտություն: Միևնույն ժամանակ ծանր էր տեղահան արված հայ բնակչության բժշկա-կենցաղային դրությունը, որի մասին էին վկայում Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից ստացված բազմաթիվ նամակները և հեռագրերը: Այսպես, Արճեշի գավառապետի օգնականն Գ. Տարակսը Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանին ուղված իր հեռագրում նշում էր, որ «ազգաբնակչությունը բժշկական մեծ կարիք է զգում, այստեղ չկան ոչ բժիշկներ և ոչ էլ դեղորայք...»[1]:

Մանազկերտից ուղարկված հեռագրում, հասցեագրված այս անգամ ՀԿԿ նախագահ՝ Ս. Հարությունյանին, տեղեկացնում էր, որ «քայքայված հայ ազգաբնակչության պարենավորման և բժշկական կարիքը հսկայական է... Արճեշում կարիքը ավելի սուր է...»[2]:

Հաշվի առնելով գաղթի հետևանքով առաջացած հայ գաղթականության նյութական մեծ կարիքը և օգնության գործի կազմակերպման անհրաժեշտությունը, Կովկասի փոխարքայի 1914 թ. նոյեմբերի 12-ի 529215

---

[1] «Հորիզոն», 1915 թ. հուլիսի 3, № 146:

[2] Նույն տեղում, 1915 թ. հուլիսի 4, № 147:

որոշմամբ թույլատրվեց կամավոր ավիրատվություններ կատարել հայ գաղթականության օգտին[3]:

Կովկասի հայկական կենտրոնական նպաստից հանձնախումբը 1915 թ. հունվարի 19-ի իր հեռագիր-կոչով դիմելով Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախմբին, նշում էր, որ «Թուրքիո դեմ պատերազմի հետևանքով մոտավորապես 100000 հայեր խույս տալով ապաստանած են Կովկաս: Ծայրահեղորեն ցավալի կացություն մը ստեղծված է: Անոթությունից և ցրտից բազմաթիվ մեռնողներ կան: Մեր ժողովուրդը կործանումից փրկելու համար անհրաժեշտ է առատ օգնություն...»[4]:

Վանի նահանգապետ Արամ Մանուկյանը Գևորգ 5-րդ կաթողիկոսին ուղղված 1915 թ. մայիսի 26-ի իր գրության մեջ նկարագրելով Վան-Վասպուրականում ստեղծված ոչ բարվոք իրավիճակը նշում էր, որ «Եթե անմիջական դրամական օգնություն չհասնի Կովկասից, այն ինչ որ չկրցավ ընել թյուրքի յաթաղանը, պիտի ընէ... և մանավանդ տարափոխիկ հիվանդությունը: Կխնդրեմ Եղբայրական օգնության կոմիտեից, որ անմիջական դրամական օգնություն հասցնի ավերված գյուղերի տների վերաշինության և գյուղատնտեսական գործիքների և կենդանիների հայթայթման համար»: Վերջում նա ավելացնում էր. «Կհուսամ, որ ի նկատի առնելով այս բացառիկ վիճակը, կոչ կնենք բոլոր բարեգործական և կուլտուրական ընկերություններին, որ անմիջական օգնության հասնեն Վասպուրականին»[5]:

Վանի շրջանային վարչությունն իր հերթին ևս, հունիսի 23-ի իր գրությամբ դիմելով հայ ժողովրդին, խնդրում էր օգնության հասնել իրենց շրջանի ծով կարիքներին, ով ինչով կարող է»[6]: Միաժամանակ Վանի նահանգապետը հեռագրով Քաղաքների միության կովկասյան բաժանմունքի լիազոր Ա. Խատիսյանին հաղորդում էր, որ տեղական միջոցներով անհնարին էր հոգալ Վանում գործող բժշկական անձնակազմի ծախքերը: Արամն առաջարկում էր այդ ծախքերը հոգալ Քաղաքների միության կովկասյան բաժանմունքի միջոցներից կամ այլ աղբյուրներից[7]:

Արամ Մանուկյանի և Վանի շրջանային վարչության դիմումը լայն արձագանք գտան հայ գաղթականության հոգսով ապրող ամենքի սրտերում: Դեռ մայիսի 17-ին բարեգործականի դահլիճում կայացած արևմտահայերի միության ժողովը ընտրել էր ԿՀԲԸ կից գործող մի վարչություն, որը կամավոր ամսավճարների միջոցով կազմակերպում էր հայրենակից-եղբայրների օժանդակությունը[8]:

Գաղթականները վերադառնում էին իրենց բնակության սկզբնական վայրերը և վերսկսում իրենց ընդհատված գործունեությունը: «Գաղթականները խմբերով վերադառնում են և անցնում դաշտային աշխատանքների,— Ղարաքիլիսայից Երևան՝ Խորեն եպիսկոպոսին ուղղված 1915 թ. ապրիլի 18-ի իր հեռագրում նշում էր Տիգրանովը,—հետագա դանդաղկոտություններ կարող է պատճառ հանդիսանալ խոշոր և անուղղելի վնասների և կորուստների»[9]:

---

[3] Հայաստանի Հանրապետության Պատմության Կենտրոնական Պետական Արխիվ (ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 57, ց. 2, գ. 1248, թ. 3:

[4] «Երիտասարդ Հայաստան», 1915 թ. հունվարի 26, № 16:

[5] «Արարատ», 1915 թ. հունիս, № 2:

[6] Նույն տեղում:

[7] «Հորիզոն», 1915 թ. հունիսի 13, № 130:

[8] Նույն տեղում, 1915 թ. հուլիսի 2, № 145:

[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 48, թ. 87;

Եղբայրական օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովը հունիսի 4-ին կայացրած իր որոշման մեջ նշում էր, որ «Ի նկատի առնելով հայ ժողովրդի երկրում կրած նոր հալածանքները, որոնց շնորհիվ կարիքն անչափ ծավալվել է, հանձնաժողովը որոշել է ըստ կարելվույն մեղմացնել դժբախտացած հայ ժողովրդի սոսկալի վիճակը Տաճկա-Հայաստանում, հատկացնելով Վանի շրջանում պատսպարվածներին միանվագ 30000 ռ., Մանազկերտին՝ 10000 ռ., թողնելով հիմնավոր օգնությունը մոտ ապագային, երբ կարիքի չափը պարզված կլինի և կստացվեն պահանջված վիճակագրական տեղեկությունները: Բացի դրամական օգնությունից Վան և Մանազկերտ հանձնաժողովը ուղարկում է շորեր, շաքար թեյ»[10]:

ԿՀԲԸ խորհրդի և ՀԿԿ նախագահ Ս. Հարությանյանը Վանի նահանգապետին ուղղված իր նամակով տեղեկացնում էր, որ հիշյալ ընկերությունը Վանի և Մանազկերտի շրջանի հայերի օգնության համար հատկացրել էր 45000 ռ., որի մի մասը ծախսվել էր դեղորայքի, գործիքների, թեյի, շաքարի և այլ իրերի վրա, որոնք ուղարկվել էին Վան[11]: Միաժամանակ Վան են գործուղվում բժշկական 2 խմբեր[12]:

Ընդհանրապես մոտ 60000 գաղթականների վերադարձի և քայքայված տնտեսության վերականգնման համար պահանջվում էր 5 միլիոն ռ., որը պետական գանձարանից ստանալու նպատակով 1915 թ. մարտի 14-ին կոմս Իլարիոն Իվանովիչին էր դիմել Ամենայն Հայոց կաթողիկոսը[13]:

1915 թ. հուլիսին Վասպուրականում տեղի ունեցած սոսկալի աղետից հետո, երբ ռուսական զորքերը կրկին մտան Վան, վասպուրականցի մի խումբ հայ մտավորականներ, տոգորված հայրենիքի վերածնման և վերաշինության տենչով, դիմեցին կաթողիկոսին, խնդրելով, որ վերջինս աջակցի իրենց և հնարավորություն ընձեռի վերադառնալու հայրենիք՝ երկրի քայքայված տնտեսությունը վերաշինելու համար: «Երկրացիներիս համար մի բան պարզ էր,—գրում է «Հորիզոն»-ը, **հայրենիքը թեկուզ մի ամսով, պարապ չպիտի թողնել,** որովհետև առանց այդ քանդված հայրենիքին, մենք չոր, կտրված եղեգի պես քամու ձեռքին խաղալիք կդառնանք»[14]: Ահա այսպես էր բնութագրում «Հորիզոն» պարբերականը Հայաստանի վերաշինության գործի անհրաժեշտությունը:

Վերոհիշյալ մտավորականներն իրենց հույսը կապել էին ռուսական իշխանությունների կողմից Վանի նահանգի կառավարիչ կարգված ռուսական բանակի գնդապետ Ալֆրեդ Տերմենի հետ, որը դիմելով այդ մտավորականներին, առաջարկում էր վերակազմել արևմտահայերից բաղկացած Երկրապահ գունդը (միլիցիան)՝ նահանգի ազգաբնակչությանը ավազակություններից և ավարառություններից պաշտպանելու և երկրի կարգի ու ապահովության վրա հսկելու համար[15]: Միաժամանակ վերադարձող հայերին նահանգապետը խոստանում էր ամեն տեսակի աջակցություն՝ ընդհուպ մինչև ազատ հողերի բաժանում: Ի նկատի ունենալով Ա. Տերմենի

---

10 «Աշխատանք», 1915 թ. հունիսի 20, № 26:

11 Նույն տեղում, 1915 թ. հունիսի 24, № 27:

12 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 62ա, նաև «Հորիզոն», 1915 թ. հունիսի 11, № 128:

13 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1248, թ. 1, նաև «Հորիզոն», 1915 թ. հունիսի 11, № 128:

14 «Հորիզոն», 1916 թ. սեպտեմբերի 7, № 200:

15 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 14, թ. 1, նաև Public Record Office of England, FO 371/70371/2768, file (161096), p. 340.

այդ առաջարկը, վանեցի մի խումբ մտավորականներ հիշյալ նպատակի իրագործման համար, կազմեցին հանձնաժողով, սակայն զրկված լինելով նյութական միջոցներից, դիմեցին կաթողիկոսի անմիջական օգնությանը:

Վերջինս, իր՝ 1915 թ. հոկտեմբերի 10-ի № 1755 գրությամբ հայտնում էր, որ «հայ գիտակից մասի այն բոլոր ջանքերը և աշխատանքները, որոնք իրապես նպաստելու են Վասպուրականի, մասնավորապես Վան քաղաքի վերաշինությանը, բարեկարգությանը և Վասպուրականի ազգային-կրոնական հաստատությունների, վանքերի, եկեղեցիների, դպրոցների և այլ պատմական հիշատակարանների պահպանությանն ու բարգավաճմանը, այս ամենը բնականաբար արժանանալու է Վեհափառ Հայրապետի քաջալերությանը, բարձր հովանավորությանը և օրհնությանը»[16]: Եվ ահա հաշվի առնելով գործի կարևորությունը, կաթողիկոսը 3000 ռ. հատկացրեց այդ նպատակի իրագործման համար[17]: Միաժամանակ, կաթողիկոսը անհրաժեշտ էր համարում հայ ժողովրդի, առանձնապես հայ քաղաքական կուսակցությունների համերաշխ և համամիտ գործունեությունը և վերոհիշյալ ծրագրի միահամուռ ուժերով իրագործումը[18]:

Նշված հանձնաժողովի որոշման հիման վրա 1915 թ. աշնանը Թիֆլիսում հիմնվեց և իր գործունեությունը սկսեց Հայաստանի Վերաշինության հանձնաժողովը, որն իր իրավասությունը տարածեց ամբողջ Վան-Վասպուրականում: Քաղաքացիական այդ վարչությունը, որը գործում էր շրջանապետ Ա. Տերմենի նախագահությամբ, (վերջինս ձիավոր խմբի և թվով 2000 բնիկ վասպուրականցիների հետ միասին 1915 թ. հոկտեմբերի 23-ին ժամանել էր Վան), մի կողմից վարում էր ոստիկանական պարտականություններ, իսկ մյուս կողմից իրականացնում էր նահանգի դատավարական և տնտեսական գործերը[19]: Փաստորեն, հանձինս Հայաստանի Վերաշինության հանձնաժողովի վերականգնվեցին Վանի նահանգում նախկինում գոյություն ունեցող վարչական հաստատությունները:

Հայաստանի Վերաշինության հանձնաժողովի անմիջական ղեկավարությամբ էր, որ վերականգնվեց Վանի Երկրապահ գունդը (միլիցիան), որը ղեկավարում էր Ա. Եկարյանը: Այն բաղկացած էր 120 հոգուց, որից 35-ից 40-ը Չանկալյանի ղեկավարությամբ ժամանած ամերիկահայ երիտասարդներ էին: Կազմված լինելով մասնավորապես Վանեցի և ամերիկահայ կամավորների համերաշխ դաշնակցությամբ, Վան-Վասպուրականի համար ճգնաժամային և պատմական այդ րոպեներին, Երկրապագահ գունդը (միլիցիան) կոչված էր իրականացնելու մի շարք բարդ և անհետաձգելի խնդիրներ: Ժողովրդի մեջ տեղի ունեցող զանազան վեճեր և հարցեր լուծելու համար Երկրապահ գնդի կենտրոնական մարմինը՝ Ա. Տերմենի ղեկավարությամբ, անմիջապես հաստատեց դատարան, քաղաքապետություն, ոստիկանություն, երկրագործական տեսչություն և գյուղական վարչական մարմիններ[20]: 1916 թ. հունվարի 5-ին «Մշակ»-ի խմբագիր Հ. Առաքելյանին ուղարկած իր մի նամակում Ա. Տերմենը նշում էր, որ «իմ կառավարության փոքրաթիվ պաշտոնեությունը հնարավորություն չի տալիս հարկավոր չափով զարգացնել վարչական աշխատանքները, իսկ տեղական ձրի աշխա-

[16] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 294, ց. 1, գ. 14, թ. 1:
[17] Նույն տեղում, ֆ. 50, ց. 1, գ. 48, թ. 169:
[18] Նույն տեղում:
[19] «Վան-Տոսպ», 1916 թ. մարտի 27, № 18:
[20] «Վան-Տոսպ», 1916 թ. մայիսի 22, № 28:

տող ուժեր չկան: Անհագին օգուտ են բերում ինձ երկրապահ կամավորները (կազմակերպված Վերաշինության հանձնաժողովի միջոցներով), որոնք փոխարինում են պակասող վարչությանը: Նրանց խելացի և նպատակահարմար աշխատությունը ինձ տալիս է լիակատար հույս՝ նպաստավոր հետևանքների հասնելու»[21]:

Ուժեղ կառավարություն հաստատելու համար հարկավոր էր բավարար քանակությամբ բյուջե, մի կարևոր նախապայման, որ բացակայում էր Վանում: Հետևաբար դրանով էր պայմանավորված այն իրողությունը, որ Վան-Վասպուրականը հետագա 8 ամիսների ընթացքում կառավարվեց ընդամենը մեկ դատավորով, մեկ քաղաքապետով և մեկ ոստիկանով:

Անմխիթար վիճակում էր գտնվում Վան-Վասպուրականի տնտեսական և հոգևոր կյանքը 1915 թ. աշնանը: «Մսի, յուղի, պանրի և նման ուտելիքների սով է տիրում: Քարյուղի չգոյության պատճառով շատերը երեկոյան՝ արևը մայր մտնելուն պես, անկողին են մտնում: Հագուստեղենի կարիքը մեծ է: Առայժմ ամբողջ բնակչության համար ամենամեծ մտահոգությունը հացի և մասնավորապես սննդեղենի խնդիրն է: Եկեղեցիները բոլորն էլ այրված և մոխրակույտ են դարձել: Ամբողջ ժողովուրդը մնում է առանց հոգևոր մխիթարության...»[22]: Այրվել էին քաղաքի կարևոր շինությունների մեծամասնությունը, հատկապես Այգեստանի չորս և քաղաքամեջի երկու եկեղեցիները, բոլոր գրադարանները, ուսումնարանը և շուկան[23]:

1915 թ. հոկտեմբերին Վանի շրջանում կային 25288 գաղթականներ, որոնցից՝ 23822-ը հայեր էին: Բացի դրանից կային նաև 1227 ասորի, 201 թուրք և 38 եզդի գաղթականներ[24]:

Վերաշինության գործը հաջող կազմակերպելու նպատակով Վան մեկնեցին գաղթականական և նպաստաբաշխ տարբեր կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչներ: Իսկ 1916 թ. հունվարի առաջին շաբաթվա ընթացքում Վանում հաստատվեց Տնտեսական նպաստաբաշխ հանձնաժողովի կազմը, որը վավերացվեց Ա. Տերմենի կողմից[25]:

Վանի բնակչության թվաքանակը պարզելու նպատակով Քաղաքների միության Վանի լիազոր Ս. Աթանեսյանը 1916 թ. հունվարին ձեռնամուխ եղավ փախստականների ցուցակագրության անցկացմանը՝ այդ առիթով նահանգապետից ստանալով 1000 ռ.: Ցուցակագրությունը կատարվում էր գեներալ-մայոր Թամամշևի նախաձեռնությամբ, որը նպատակ ուներ կարգավորելու գաղթականական բնակարանների համար տրվելիք վարձի չափը: Համաձայն Ա. Աթանեսյանի կազմած մանրամասն ցուցակների, 1916 թ. հունվարին Վանն ուներ 2445 բնակիչ, որոնցից 716-ը՝ տղամարդիկ էին, 919-ը՝ կանայք, իսկ 710-ը՝ երեխաներ: Բացի վերոհիշյալից, Վանում կային նաև 204 որբեր և 68 հիվանդներ: Այդ թվից հայերը կազմում էին 2063, իսկ ասորիները՝ 382 հոգի[26]: Ավելի մեծ թվով գաղթականներ գտնվում էին քաղաքի հյուսիսային կողմի գյուղերում՝ գլխավորապես Թիմարի շրջանում:

---

[21] Նույն տեղում, 1916 թ. փետրվարի 7, № 11:

[22] Նույն տեղում, 1915 թ. դեկտեմբերի 13, № 3:

[23] «Ազգ», 1916 թ. փետրվարի 25, № 46:

[24] Центральный Государственный Военно-Исторический Архив Российской Федерации (ЦГВИАРФ), ф. 13227, оп. 3, д. 41, л. 49.

[25] «Հովիտ», 1916, փետրվարի 21, № 7:

[26] «Վան-Տոսպ», 1916 թ. հունվարի 17, № 8, նաև հունվարի 31, № 10:

Հարավային կողմում գաղթականները կենտրոնացված էին Հայոց Ձորի, Գավաշի, Շատախի և Մոկսի շրջակայքում[27]: Քաղաքի բնակչության թիվը գավառներում կենտրոնացած գաղթական բնակչության թվի հետ միասին կազմում էր շուրջ 14374 հոգի, որոնցից 8900-ը՝ տղամարդիկ էին, 2890-ը՝ կանայք, իսկ 2584-ը՝ երեխաներ[28]:

1916 թ. հունվարին Ա. Տերմենի նախագահությամբ տեղի ունեցավ առանձին մի խորհրդակցություն, որին մասնակցում էին նաև Վանի նահանգապետության անդամներ Ա. Աթանեսյանը, Ա. Եկարյանը, Ռ. Շատվորյանը, Հովնանյանը, Ա. Համբարյանը, Հ. Ամսարյանը և Հ. Գալիկյանը: Խորհրդակցության ժամանակ Քաղաքների միության Վանի լիազոր Ա. Աթանեսյանը հանդես գալով Վանի նահանգի գաղթականների կարիքների համար նախատեսված նախահաշիվ զեկուցումով, նշեց, որ այդ ժամանակաշրջանում նյութական ամենամեծ կարիքը զգացվում էր Թիմարի շրջանի 36 գյուղերում, ուր կենտրոնացված էին հայրենիք վերադարձած վասպուրականցիների մեծ մասը: Հաշվի առնելով գործի կարևորությունը, Ա. Տերմենը այդ նախահաշիվն ուղարկեց Քաղաքների միության կովկասյան լիազոր Ա. Խատիսյանին և Հայաստանի Վերաշինության հանձնաժողովի նախագահ Դ. Ավան-Յուզբաշյանին, միաժամանակ խնդրելով, որ վերջիններս կազմակերպեն համապատասխան օգնություն 252000 ռ. գումարի սահմաններում, մի գումար, որը կբավականացներ 9050 դեսյատին հողատարածության մշակման և մոտ 250000 գաղթականների գոյատևման համար[29]:

Վանի գաղթականության վիճակը ծանր էր հատկապես հոկտեմբեր-նոյեմբերյան ներգաղթից հետո: Ա. Խատիսյանին ուղարկած իր հեռագրում Ա. Տերմենը նշում էր, որ «Սննդական մթերքների պակասության պատճառով Վանի ազգաբնակչությունը, որ կերակրվում է միայն հացով, հյուծվում է: Ուտանից և Արտամետից բնակիչները գալիս են Վան: Պետք է հաստատել պարենավորման խանութներ, սննդական կայաններ, որի համար անհրաժեշտ են մթերքներ և մասնավոր միջոցներ: Յուրաքանչյուր մարդուն միջին հաշվով օրական ուտելիք կհատկացվի 40 կոպ.»[30]: Կարիքի աստիճանի և եղած պաշարների ու մթերքների ցուցանիշ կարող էին հանդիսանալ Վանում տիրող հետևյալ գները, որ այն ժամանակ արձանագրել էր Քաղաքների միության կովկասյան բաժանմունքի Վանի ներկայացուցիչ՝ Ա. Աթանեսյանը: Այսպես. սև հաց՝ ֆունտը 7 կոպ., ալյուր՝ փութը 4 ռ., գարի՝ 3 ռ., հացահատիկ՝ 1 ռ., կարագ՝ ֆունտը 2 ռ., պանիր՝ 90 կոպ., ձու՝ 15 կոպ., կաթ՝ շիշը 60 կոպ., շաքար՝ ֆունտը 50 կոպ., վառելիք՝ 35 կոպ., օճառ՝ 60 կոպ., մեկ այծը՝ 15—18 ռ. և այլն: 500 ռ. կարելի էր գնել Վանի շուկայում առկա ամբողջ ապրանքը[31]:

Լիազոր ներկայացուցչի կողմից արձանագրվել էր նաև՝ 8 կով, 11 էշ, 19 եզ, 15 հավ, 1 աքլոր, 350 ոչխար, 350 քաշող անասուն և այլն: Մինչդեռ նահանգի գաղթականության կարիքները բավարարելու համար անհրաժեշտ էր՝ 20000 գլուխ խոշոր եղեջերավոր անասուն, 1000 կով, 40000 այծ և մին-

[27] «Ազգ», 1916 թ. հունվարի 5, № 4:

[28] ЦГВИАРФ, ф. 13227, оп. 3, д. 41, л. 49, նաև «Հորիզոն», 1916 թ. փետրվարի 3, № 25:

[29] «Մշակ», 1916 թ. մարտի 8, № 52, նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 32, ց. 1, գ. 15, թ. 30:

[30] «Վան-Տոսպ», 1916 թ. հունվարի 17, № 8:

[31] Центральный Государственный Исторический Архив Республики Грузии (ЦГИА РГр.), ф. 520, оп. 1, д. 40, л. 55.

չև 5000 ձի և էշ, այսինքն 1/10 մասն այն բաժնի, որ բնակչությունը կորցրել էր 1915 թ. հուլիսյան գաղթի ժամանակ[32]:

1915 թ. դեկտեմբերի 11-ից սկսվեց գաղթականների հացի բաժանումը: Սահմանված կարգի համաձայն յուրաքանչյուր գաղթականի տրվում էր մեկ ֆունտ հաց, որը բաժանվում էր անխտիր բոլորին՝ առանց ազգային խտրականության: 1915 թ. դեկտեմբերի 11-ից մինչև 1916 թ. հունվարը գաղթականներին բաժանվեց 818 փութ 24 ֆունտ հաց՝ 1308 ռ. արժողությամբ: Հացի բաժանումն առանց վարձատրության, իրականացնում էին վերոհիշյալ Հացաբաշխման հանձնաժողովի անդամները: Խիստ մտահոգիչ բնույթ պիտի ստանար ժողովրդին հաց մատակարարելու հարցը, եթե անվընաս մնացած չլիներ նախորդ տարվա չքաղված հունձքը: Միևնույն ժամանակ, բացակայում էր տաք կերակուրը, թեյը և շաքարը: Յուրաքանչյուր գաղթականի սննդի համար նախատեսված 15 կոպեկի դիմաց ծախսվում էր ընդամենը 4 կոպեկ: Պարսկաստանից սննդամթերքներ էին հաճախ ներմուծվում Վան, սակայն դրանք վաճառվում էին առասպելական գներով: Այդ էր պատճառը, որ Քաղաքապետարանը սակագին էր հաստատել համարյա թե բոլոր մթերքների վրա[33]: Բնակչության պարենային դժվարությունները հաղթահարելու, ինչպես նաև հացաբաշխման գործը դրամական նպաստով փոխարինելու նպատակով, փետրվարի 10-ին Պարենավորման հանձնախումբը վերակազմվեց Դրամաբաշխ հանձնաժողովի: Այն դրամական նպաստ էր բաժանում հետևյալ սկզբունքի համաձայն. մինչև 5 տարեկան երեխաներին՝ օրական 10 կոպ., իսկ 5—18 տարեկաններին, ինչպես նաև 50 տարեկանից բարձր գաղթականներին՝ 20 կոպ.[34]: 18—50 տարեկան անձանց նպաստ չէր տրվում՝ բացառությամբ անաշխատունակների:

Վասպուրականի հողային հարաբերությունները կարգավորելու և երկրի տնտեսական ճգնաժամը վերացնելու նպատակով ,Վանի քաղաքապետարանի կողմից 1916 թ. փետրվարի 15-ին ի գիտություն երկրի ազգաբնակչությանը հայտարարվեց, որ «Նորին Վսեմություն կառավարիչ պ. Տերմենի արտոնությամբ կհայտարարվի Վանի նահանգի բոլոր ազգաբնակչությանը, թե, նրանք ովքեր կուզեն տեղացի թուրքերի այգիները, արտերը, տները և ուրիշ կալվածները շահագործել, պարտավոր են քաղաքապետությանը դիմել և վարձու առնել մեկ տարի պայմանաժամով: Իսկ տեղացի հայերի լքված կալվածները շահագործել ուզողները նմանապես քաղաքապետարանից վարձու պիտի առնեն նորից մեկ տարի պայմանաժով, միայն թե վարձու տված թվականից մինչև մեկ ամիս հետո, եթե կալվածատերը գալու լինի պիտի կարենա վարձակալի օրինական ծախսերը հետ գալուց հետո իր կալվածին տիրանա, բայց եթե մեկ ամիս ժամանակամիջոցից հետո գալու լինի պիտի կարենա մինչև այն օրը եղած ծախուց կեսը վճարելով, վարձակալի հետ ընկերակցությամբ շահագործել կալվածը մինչև մեկ տարի»[35]: Սակայն առաջարկված պայմանները ձեռնտու չէին վարձակալներին, որի հետևանքով վարձողներ գրեթե չեղան:

Վան-Վասպուրականի համար ճնշիչ էին մանավանդ 1915 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները: Եղան օրեր, երբ անհրաժեշտ համարվեց պաշ-

---

[32] Նույն տեղում, էջ 56:

[33] «Վան-Տոսպ», 1916 թ. փետրվարի 28, № 14, նաև ապրիլի 10, № 20 նաև «Հորիզոն», 1916 թ. ապրիլի 10, № 71:

[34] ЦГИА РГр., ф. 520, оп. 1, д. 40, л. 55.

[35] «Վան-Տոսպ», 1916 թ., մարտի 20, № 17:

տոնապես խորհրդակցել ժողովրդի փոխադրության մասին: Սակայն Երկրապահ գնդի Կենտրոնական մարմնի ձեռք բերած համապատասխան տեղեկությունները թշնամու շարժումների վերաբերյալ հույսեր ներշնչեցին անդրդվելի մնալ: Դեռ ավելին, Խնուսի (հունվարի 16), Մուշի (փետրվարի 1), Էրզրումի (փետրվարի 2) և Բիթլիսի (փետրվարի 20) գրավումներից հետո Անդրկովկասում ապաստանած 220000 գաղթականների մոտ առաջ եկավ դեպի Վան և գրավված շրջանները վերադառնալու անհագ ձգտում: Գաղթականներին Անդրկովկասում թողնելը, որտեղ տեղական ազգաբնակչությունը գտնվում էր պարենային ճգնաժամի մեջ, որտեղ բացակայում էր հացը, ալյուրը և սերմացուն, անհամատեղելի էր ստեղծված իրավիճակի հետ: Այդ հանգամանքն էլ ստիպեց կառավարությանը իրականացնել գաղթականների հետադարձ վերաբնակեցումն այն իմաստով, որ առաջին հերթին հայրենիք վերադառնային միայն աշխատունակ տղամարդիկ: Ելնելով ռազմական նկատառումներից, վերաբնակվեցին Վանի նահանգի մի մասը, Դիադինի, Բայազետի գավառները և Ալաշկերտի հովիտը: Բնակչության ամբողջական վերադարձի թույլտվություն կառավարությունը տվեց միայն 1916 թ. մարտի վերջերին, երբ նոր էին միայն սկսվում գարնանային դաշտային աշխատանքները: Ա. Աթանեսյանը և Ա. Եկարյանը Պետական դումայի անդամներ Մ. Պապաջանյանին և Մ. Ամենյանին Վանից Պետրոգրադ ուղարկած իրենց հեռագրում նշում էին, որ «Ավերված Վանի և նրա շրջանի 50000 ազգաբնակչության ներգաղթը սկսվել է, եկողները ունեն միայն մի նպատակ՝ վերաշինել իրենց տները և վերականգնել քայքայված տնտեսությունը: Անհրաժեշտ են ահագին միջոցներ՝ առաջին հերթին սերմացու, լծկաններ և գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու համար: Վանի տեղական կոմիտեն որպես արտահայտիչ շրջանի ազգաբնակչության կարիքների, հույս ունի ստանալ պետական երկարաժամկետ փոխառություն...»[36]:

Գաղթականներն իրենց նախկին բնակության վայրերն էին վերադառնում առանց անասունների, գյուղատնտեսական գործիքների և պարենային պաշարների, այն հույսով, որ բոլորը կստանան տեղում: Հայոց գյուղատնտեսական ընկերության լիազոր Կ. Համբարձումյանը Վանից նույն ընկերությանն ուղարկած հեռագրում մատնանշում էր, որ «Փախստականները վերադառնում են առանց աշխատավոր անասունների և սերմի: Ցանքսի ժամանակը անցնում է: Երկրում անասուններ չկան: Տեղ հասնող երկրագործները շշմած են անօգնականությունից: Աշխատեցեք անհետաձգելիորեն և շտապով փախստականներին հայթայթել կաթնատու և աշխատավոր կենդանիներով՝ հենց Ռուսաստանում, այլապես գարունը կանցնի առանց անհրաժեշտ ցանքսերի, որով և սով առաջ կգա մի ամբողջ տարով»[37]:

Գոյություն ունեին վերադարձի երկու ճանապարհներ՝ Բայազետ—Վան և Խոյ—Վան[38], որով ամեն օր 50—100 գաղթականներ էին վերադառնում միայն կովկասյան երկրամասից[39]: Ջուլֆայից մինչև Վան գործում էին Քաղաքների միության 13 սննդատու կայանները (Օրգով, Կզլդիզա, Սոուղսու, Բայազետ-աղա, Բերկրի-կալա, Պանզա, Ջանիկ, Կոտոր, Արճակ և այլ վայրերում), որոնցից յուրաքանչյուրն օրական ընդունում էր մինչև 200

[36] «Մշակ», 1916 թ. մարտի 8, № 52:
[37] «Վան-Տոնպ», 1916 թ. ապրիլի 3, № 19:
[38] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 70, ց. 1, գ. 164, թ. 228:
[39] «Հորիզոն», 1916 թ. ապրիլի 10, № 79:

գաղթականների[40]: Սննդատու կայաններում վերջիններիս բաժանվում էր ոչ միայն սնունդ (հաց և երկու կտոր շաքար), և տեղ էր հատկացվում գիշերելու համար, այլև ցույց էր տրվում բժշկական օգնություն: Սակայն գաղթականներին ցույց տրվելիք օգնությունը ոչ բոլոր դեպքերում էր լինում կազմակերպված և լիարժեք: Եվ եթե դրան ավելացնելու լինենք այն հանգամանքը, որ ճանապարհի սննդատու կայաններում սննդամթերք ստանալու հույսով տուն վերադարձող գաղթականների մի մասը սննդի անհրաժեշտ պաշարներ չէին վերցնում հետները, ապա պարզ կդառնա այն իրողությունը, որ գաղթականներից շատերը մնում էին սոված և անօգնական վիճակում: Դժվարություններ էին առաջանում նաև փոխադրության հետ կապված հարցերում: Որպես փոխադրամիջոց ծառայող կառքերի վարձավճարը Ջուլֆայից Խոյ կազմում էր 5—7 ռ., Խոյից-Սարայ՝ 4—10 ռ., իսկ Սարայից Վան՝ 3—4 ռ.:

1916 թ. մարտին Վանի 40 տներում տեղավորված էին ռուսական բանակի զինվորները, իսկ քաղաքից հեռու գտնվող 125 կիսախարխուլ տներում հանգրվանել էին 3000 գաղթականներ, որոնցից 700-ը վանեցիներ էին: Մնացած գաղթականները տեղավորված էին հիմնականում Թիմարի շրջանի 37 կիսավեր գյուղերում: Միևնույն ժամանակ, Ալյուրում ապրում էին 548, Լեսկում՝ 748, Սվանցում՝ 338, Խժիշկում՝ 282, Ջանիկում՝ 171 գաղթականներ: Կային գյուղեր, որտեղ ապրում էին 13, 12 և նույնիսկ 9 (Նորաշենում) գաղթականներ: Թիմարի շրջանի գաղթականների 70 տոկոսը եկել էին Հայոց Ձորից, Ծատախից, Մոկսից, Կվաշից և այլ շրջաններից[41]:

1916 թ. հունվարի 1-ից մինչև ապրիլի 20-ը Ջուլֆայից Վան վերադարձան մոտ 5000 փախստականներ[42], իսկ մինչև մայիս այդ թիվը հասավ 7000-ի[43]: Մոտավորապես այդ նույն ժամանակահատվածում՝ 1916 թ. հունվարի 14-ից մինչև ապրիլի 15-ը, Պարսկաստանի վրայով Վասպուրական վերադարձան ևս 4569 փախստականներ[44]: 1916 թ. մարտ-հունիս ամիսներին Վանի նահանգ վերադարձան 18000 գաղթականներ, որոնք գլխավորապես տղամարդիկ էին[45]: Սակայն ռազմաճակատում ստեղծված իրավիճակը հնարավոր էր համարում տեղաբնիկ գաղթականների վերադարձը միայն Վանա լճից արևելք և մասամբ այդ լճից դեպի հարավ ընկած տարածքը, այսինքն Վանի, Սարայի, Բաշկալեի, Խոշաբի և Ռատանի շրջանները: Բացի դրանից, առաջ էին գալիս նաև պարենային և կենցաղային մի շարք դժվարություններ: Մեսրոպ եպիսկոպոսին հասցեագրված կովկասյան բանակի հրամանատար գեներալ Յուդենիչի 1916 թ. մարտի 3-ի նամակից երևում է, որ «1) սննդամթերքի հոգսը ամբողջովին պետք է ընկնի վերադրաձողների վրա, այնպես ինչպես զինվորական զորամասերը և նրանց մատակարարող հիմնարկները ներկայումս իրենք են կրում հայտնի դժվարություններ այդ շրջանում բանակի կարիքները հոգալու գործում և 2) ներ-

---

[40] ЦГИА РГр., ф. 520, оп. 1, д. 27, л. 59, նաև «Արև», 1916 թ. սեպտեմբերի 4, № 196:

[41] ЦГИА РГр., ф. 520, оп. 1, д. 40, л. 54.

[42] «Մշակ», 1916 թ. ապրիլի 26, № 89:

[43] «Հորիզոն», 1916 թ. մայիսի 12, № 104:

[44] «Ազգ», 1916 թ. հունիսի 3, № 138:

[45] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 3:
ЦГИА РГр., ф. 520, оп. 1, д. 197, л. 37, նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 70, ց. 1, գ. 164, թ. 161:

կա ժամանակաշրջանում չի կարելի անանախադեպ վկայել այն մասին, որ հանգամանքների բերումով մենք ստիպված չենք լինի թողնել այդ շրջանները»[46]:

1915 թ. մարտի 9-ին և 11-ին Հայաստանի Վերաշինության հանձնաժողովի առջև հանդես գալով Վասպուրականի մասին զեկուցումներով, Քաղաքների միության լիազոր Ա. Աթանեսյանը մատնանշում էր, որ «ա) Վան և նրա շրջանը կարող են վերադառնալ առայժմ միմիայն տղամարդիկ՝ առանց կանանց ու երեխաների»: Այդ մասին էր վկայում նաև Երևանի նահանգապետին ուղարկված գեներալ-մայոր Թամամշևի հեռագիրը, որտեղ նշվում էր, որ «փոխարքան թույլատրել է աշխատունակ տղամարդկանց վերադառնալ Վանի նահանգ»[47]: Միևնույն ժամանակ Ա. Աթանեսյանը նշում էր, որ բ) «...առաջին հերթին վերադառնային տնտեսապես ուժեղ անհատները, այսինքն այնպիսիները, որոնք ունեին եզներ և դրամ՝ սերմացու գնելու համար: գ) Վանում և շրջակայքում դեռևս ցուրտ էր, ճանապարհները ձյունոտ և ցեխոտ և ճանապարհներին չկային անհրաժեշտ թվով սննդատու կայաններ՝ մեծ թվով գնացողների ընդունելու համար: դ) Գնացողները կարող էին հյուրընկալվել Ջուլֆա-Խոյ-Վան գծի վրա գտնվող Քաղաքների միության և Կարմիր խաչի սննդատու կայաններում..., ե) Վանում և Վասպուրականում ծախու անասուններ չկային, դրանք կարելի էր գնել Սոուջ-Բուլաղի շրջանում, Ջուլֆայում: Խոյում մի զույգ եզը երժեր 300—350 ռ., զ) միջոցներ էին ձեռք առնվում որպեսզի վերադարձող երկրագործներին բաժանվեին լծկաններ և կաթնատու կովեր ու սերմացու»: Վերջում Քաղաքների միության լիազորը հավաստիացնում էր, որ ընտանիքի անդամներին կարելի էր Վան տեղափոխել միայն ապրիլի վերջերին, երբ Վասպուրականի տնտեսական վիճակը քիչ թե շատ կկայունանար և այս անգամ ոչ թե հեռավոր, տաք ու չոր Խոյի ճանապարհով, այլ Իգդիր-Կզլդիզե-Աբաղայով, որը և՛ կարճ էր և՛ հարմարավետ»[48]:

Կանգնած լինելով տնտեսական քայքայման եզրին, Վասպուրականը կարիք էր զգում անհապաղ վերականգնման: Իսկ դրա համար անհրաժեշտ էր դրամ՝ սերմացու, անասուններ, աշխատանքային գործիքներ և այլ անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու համար: Ազգային բյուրոյին ուղղված փետրվարի 25-ի իր հեռագրում բժիշկ Մանդինյանը նշում էր, որ «Վանի շրջանի համար անհապաղ հարկավոր են 2000 երկաթյա բահեր, 2000 գերանդի... դարբիններ, հյուսներ, երկաթագործների համար գործիքների տասնյակ սարքեր, նաև այգեգործական ու տնային աշխատանքի համար կարևոր գործիքներ...»[49]: Սակայն ոչ բոլոր դեպքերում էր ձեռք բերվում անհրաժեշտ քանակությամբ դրամ՝ գաղթականների կարիքները հոգալու համար: Այդ ուղությամբ առանձնահատուկ աշխատանք էր տարվում Էջմիածնում: 1916 թ. մարտի 17-ին կաթողիկոսական առաջնորդարանում կայացած ժողովի ժամանակ, որին հրավիրված էին մասնակցելու փախստականներին նպաստող 5 կազմակերպությունների ներկայացուցիչները, հոգևոր առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը ժողովականներին ծանոթացրեց

---

[46] ЦГИА РГр., ф. 520, оп. 1, д. 197, л. 37, նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 70, ց. 1, գ. 164, թ. 161:

[47] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 70, ց. 1, գ. 164, թ. 90, նաև ֆ. 50, ց. 1, գ. 48, թ. 192, նաև ֆ. 223, ց. 1, գ. 30, թ. 10:

[48] «Մշակ», 1916 թ. մարտի 12, № 56, նաև «Վան-Տոսպ», 1916 թ. մարտի 13, № 15:

[49] «Վան-Տոսպ», 1916 թ. մարտի 6, № 15:

Կաթողիկոսի 2 կոնդակներին, որոնցից առաջինով կաթողիկոսը ցանկություն էր հայտնում որպեսզի Ռուսաստանի հայաբնակ վայրերն ուղարկվեր մի պատվիրակություն՝ Վանի շրջանի վերաշինության գործի համար հանգանակություն կատարելու նպատակով: Ժողովը միաձայն որոշեց ընտրել 3 հոգուց բաղկացած պատվիրակությունն, որի կազմի մեջ մտան՝ Ա. Ահարոնյանը, Հ. Առաքելյանը և Գ. Զալխուշյանը[50]:

Վերաշինության գործի հաջողությանը նոր թափ հաղորդելու նպատակով Թիֆլիսի Հայոց Գյուղատնտեսական ընկերությանը կից՝ Պատերազմից վնասված հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեի Գործադիր բյուրոն 1916 թ. մարտին իր կողմից Վանի շրջանի լիազոր նշանակեց հմուտ գյուղատնտես Կ. Համբարձումյանին, որին իբրև օգնական-հրահանգիչներ ուղարկվեցին մասնագետ-գյուղատնտեսներ՝ Տ. Թերլեմեզյանը և Ա. Մաքսապետյանը[51]: Վերոհիշյալ կոմիտեն համաձայնության եկավ, հայ փախստականներին օգնող ամերիկյան կոմիտեի անդամներ դոկտոր Մակկալումի և Գրեյսրի հետ՝ Վանի մի որևէ շրջան վերցնելու և այնտեղի գյուղացիների համար սերմացու, երկրագործական գործիքներ և լծկան եզներ հայթայթելու և ամեն տեսակի օժանդակություն կազմակերպելու ուղությամբ: Նույն հանձնաժողովը միևնույն ժամանակ մի քանի գյուղատնտես-մասնագետներ հատկացրեց դոկտոր Մակկալումի և Գրեյսրի տրամադրության տակ[52]:

1916 թ. մարտին հիմնվեց Վանի Կոոպերատիվ ընկերությունը, որի նպատակն էր Վանի գաղթական բնակչության համար արդյունաբերել անհրաժեշտ կենսամթերքներ և կազմակերպել դրանց սպառումը: Կարևոր նպատակ էր համարվում գյուղատնտեսական արդյունաբերության (կաթնատնտեսության, հողամշակության ,հավաբուծության, անասնապահության) կազմակերպումը, սպառողական խնութների և փռերի հիմնումը[53]:

Գյուղտնտեսական աշխատանքները վերսկսելու և գաղթականներին օժանդակելու նպատակով մարտի 23-ին Դ. Ավան-Յուզբաշյանի նախագահությամբ կայացավ Վերաշինության հանձնաժողովի հերթական նիստը, որին մասնակցում էր նաև Պետրոգրադի Հայկական կոմիտեի ներկայացուցիչ Ա. Սարուխանյանը: Հանձնաժողովը քննարկելով փոխնախագահ Հ. Առաքելյանի զեկուցումը և լսելով Վանի շրջանապետ Տերմենի հեռագրերը, կայացրեց մի շարք որոշումները. 1) Վանի շրջանում անմիջապես սկսել երկրագործական աշխատանքներ՝ այդ նպատակի համար հատկացնելով 100000 ռ. և նախապես բաց թողնելով՝ 40000 ռ. դրամ: 2) Նպաստամատույց ընկերության հետ միասին և Լոնդոնի Կոմիտեի ուղարկած դրամներով Վանում հիմնել երկրագործական ապաստարան: 3) Ընդունել շրջանապետ Ա. Տերմենի առաջարկը՝ վերադարձող փախստականների հողագործական աշխատանքի պաշտպանության վերաբերյալ, տալով ամսական 4000 ռ.: 4) Երկրագործական անհրաժեշտ կարիքների համար Վանում հիմնել երկրագործական արհեստանոց կամ դարբնոց: 5) Վանա լճի վրա՝ Ադելջրվազ—Ախլաթ—Դատվան ուղությամբ, հարաբերությունների և փո-

---

50 «Վան-Տոսպ», 1916 թ. մարտի 20. № 17:
51 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 32, ց. 1, գ. 15, թ. 17:
52 «Հորիզոն», 1916 թ. մարտի 25, № 68:
53 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 139, թ. 6—7:

խաղրությունների համար կառուցել 2 նավակներ: 6) Հանձնաժողովի վերոհիշյալ որոշումները իրականացնելու համար իբրև ներկայացուցիչներ Վան ուղարկել Ս. Մալխասյանին, Մ. Մինասյանին և Գ. Վարդանյանին: Վերջիններիս Վանում պետք է միանային նաև Ռ. Հովնանյանը և Կ. Կարախանյանը, միասին կազմելով գործադիր մարմին՝ պատվավոր նախագահությամբ նահանգապետ Ա. Տերմենի և նախագահությամբ Ս. Մալխասյանի և Մ. Մինասյանի: 7) Էրզրում գնալու համար ընտրել Ա. Եզեկյանին և այդ մասին տեղյակ պահել Կաթողիկոսին[54]:

Հաշվի առնելով գաղթականների նյութական ծանր վիճակը, Վանի լիազոր Ա. Աթանեսյանը մարտի 29-ին Քաղաքների միության Գլխավոր կոմիտեին ներկայացրեց մանրամասն մի զեկուցագիր՝ «Վանի շրջանի փախստականների հերթական կարիքների մասին» թեմայով, որտեղ նահանգի 50000 գաղթականների օգնության համար վերջինս անհրաժեշտ էր համարում՝ 20000 գլուխ եզ, 10000 գլուխ կով, 40000 գլուխ ոչխար և 50000 ձի ու էշ, այսինքն՝ 1/10 մասն այն կորուստների, որ տվել էր ազգաբնակչությունը նահանջի 3—4 օրվա ընթացքում: Ընդհանրապես Վանի և նրա նահանգի նյութական վնասը, Ա. Աթանեսյանի հաշվարկով, կազմում էր 100 մլն. ռ., իսկ մարդկային կորուստը հայերից՝ 28000 հոգի: 20000 դեսյատին հողատարածության մշակման համար Ա. Աթանեսյանն անհրաժեշտ էր համարում առնվազն 20000 փութ սերմացու, որը 1,5 տարում կբավականացներ 50000 գաղթականների պարենային դժվարությունները հաղթահարելու համար: Միևնույն ժամանակ Ա. Աթանեսյանն առաջարկում էր. ա) մինչև որ տեղում չապահովվի ազգաբնակչության սննդի հարցը, թույլ չտալ 25000-ից ավելի տեղացիների վերադարձը Վանի շրջան, բ) վերադարձողների համար Ջուլֆա—Խոյ—Վան գծի վրա բացել 10 սննդակայաններ, գ) ազգաբնակչության համար հայթայթել 8000 ռ. բանջարեղենի սերմեր, դ) որպես հիմք ընդունել միմիայն Թիմարի շրջանի 20000 գաղթականների համար կազմած 255000 ռ. նախահաշիվը, ե) շտապել օր առաջ իրագործել այդ բոլորը, քանի որ յուրաքանչյուր օրը թանկ էր և ուշացումը ծանր կարող էր անդրադառնալ այն գաղթականների վրա, որոնք առանց այդ էլ տվել էին չափից ավելի կորուստներ[55]:

Մարտի 30-ին Վասպուրականի հայությունն ապրում է ճգնաժամային րոպեներ: Այդ օրը ռուսական բանակի ռազմական գործողությունների վերաբերյալ Բիթլիսից անավոր լուրեր են ստացվում: Բայց հաջորդ օրը, մարտի 31-ի առավոտյան, նահանգապետ Ա. Տերմենի կողմից ի լուր ամենքի տեղեկացվում է նոր ստացված հեռագիրն այն մասին, որն ավետում էր ռուսական բանակի հաղթանակներն այդ շրջանում[56]:

Նպատակ ունենալով միջոցներ մշակել ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի դաշտերի մշակման վերաբերյալ Գյուղատնտեսական ընկերության մարտի 31-ի խորհրդակցության ժամանակ որոշվում է Վան-Վասպուրական գործուղել հմուտ գյուղատնտեսներ Ա. Ս. Պիրալովին և Ի. Ճ. Փիրումովին[57]: Բացի դրանից, ապրիլի 6-ին Թիֆլիսի առաջնորդարանում կայացած փախստականներին նպաստող հայկական

---

[54] «Վան-Տոսպ», 1916 թ. մարտի 27, № 18, նաև «Ազգ», 1916 թ. մարտի 19, № 118:
[55] «Սասպարեզ», 1916 թ. հունիսի 6, № 410:
[56] «Վան-Տոսպ», 1916 թ. ապրիլի 17, № 21:
[57] ЦГИА РГр., ф. 520, оп. 1, д. 40, л. 19.

կազմակերպությունների միության երրորդ նիստում որոշվում է կառավարության կողմից հատկացված երկրագործական աշխատանքների համար նախատեսված նպաստը բաժանել երեք ընկերությունների՝ այն է՝ Նպաստամատույց և Հայաստանի Վերաշինության հանձնաժողովի, ԿՀԲԸ և Կենտրոնական կոմիտեի և Հայ գյուղատնտեսական ու Տնայնագործական ընկերությունների և նրանց կից կոմիտեների միջև և հանձնարարել նրանց գնելու լծկան անասուններ, սերմացու և երկրագործական գործիքներ՝ Վանի շրջանում գյուղացիներին բաժանելու համար: Ամեն մի ընկերությանը հատկացվում է համապատասխանաբար՝ 130000-ական ռուբլի[58]: Միաժամանակ Հայկական կենտրոնական կոմիտեն Իգդիրից Վան փոխադրության միջոցների կազմակերպման համար գեներալ Թամամշյանից լրացուցիչ ստացավ 130000 ռ.[59]:

Վանի շրջանի երկրագործական կարիքների համար դեռևս 1916 թ. հունվարին Նպաստամատույց և Գյուղատնտեսական ընկերությունները միջնորդություն էին հարուցել Պետական դումայի անդամ Մ. Պապաջանյանին բաց թողնելու համար համապատասխանաբար առաջինին՝ 103000 ռ., իսկ երկրորդին՝ 80000 ռ.: Ապրիլի 17-ին Մ. Պապաջանյանը Հ. Առաքելյանին և Ա. Սահակյանին Պետրոգրադից ուղարկած իր հեռագրում նշում էր, որ «ի հետևումն իմ միջնորդության, որին ուժ տվեցին առանձին խորհրդակցությունը և իշխան Օղոլը (Կովկասի փոխարքայի օգնականը), շինական պարենավորման մասին վարչությունը հատկացրեց և փոխադրեց հեռագրով փոխարքայի տնօրինությանը ձեր խնդրած գումարները, կլորիկ թվով՝ 200000 ռ.»[60]: Այդ գումարը գեներալ Թամամշևի կարգադրության համաձայն բաժանվեց հետևյալ կերպ. Նպաստամատույցին, Բարեգործականին և Գյուղատնտեսականին հատկացվեց 60000-ական ռ., իսկ Խոյի ռուսական փոխհյուպատոսին՝ ասորի փախստականների համար վար ու ցանքի գործքիներ հայթհայթելու նպատակով՝ 20000 ռ.[61]: Ծուտով Գյուղատնտեսականը ստացավ ևս 20000 ռ., որը նվիրաբերել էր հայ մեծահարուստ Լ. Մանթաշյանը:

Ապրիլի 17-ին Թիֆլիսի առաջնորդարանում տեղի ունեցավ գաղթականներին նպաստող հայկական կազմակերպությունների միության ժողով, որի նպատակն էր կարգավորել Վանի շրջանի գաղթականների գյուղատնտեսական օգնության գործը: Որոշվեց Վանում կազմակերպել գործադիր մարմին՝ բաղկացած երեք լիազորներից, որոնցից մեկը լինելու էր ներկայացուցիչը Հայ գյուղատնտեսական ընկերության և նրա գաղթականական կոմիտեի, երկրորդը՝ Բարեգործական ընկերության և երրորդը՝ Հայաստանի Վերաշինության հանձնաժողովի: Համապատասխանաբար լիազորներ ընտրվեցին՝ Ա. Թադևոսյանը, Ս. Մալխասյանը և Վ. Փափազյանը[62]: Գործադիր մարմինն իր վրա վերցրեց գաղթականների համար լծկաններ, սերմացու և անհրաժեշտ երկրագործական գործիքներ գնելու, վերոհիշյալը Վանի նահանգի բոլոր շրջաններում բաշխելու, գյուղատնտեսական օգնու-

---

58 «Մշակ», 1916 թ. ապրիլի 10, № 78:
59 «Հորիզոն», 1916 թ. ապրիլի 24, № 89:
60 «Մշակ», 1916 թ. ապրիլի 20, № 84:
61 «Վան-Տոսպ», 1916 թ. մայիսի 15, № 25:
62 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 32, ց. 1, գ. 15, թ. 59, և 61;

Վան-Տոսպ», 1916 թ. մայիսի 15, № 25:
ՊԿՊԱ, ֆ. 32, ց. 1, գ. 15, թ. 59, և 61;

թյան գործի վերաբերյալ այլ կարևոր որոշումներ կայացնելու պարտականություններ[63]:

Վան-Վասպուրականի բնակչությանը գյուղատնտեսական օգնություն ցույց տալու նպատակով 1916 թ. մայիսի 8-ին Թիֆլիսի Հայկական գյուղատնտեսական և Տնայնագործական ընկերությունը Վանի շրջան գործուղեց ընկերության լիազորներ Ա. Թադևոսյանին և Գ. Շահումովին, ինչպես նաև հրահանգիչներ՝ Ա. Մաքսապետյանին, Տ. Թերլեմեզյանին, Ս. Տիրատուրյանին, Վ. Առաքելյանին և Գ. Աբովյանին[64]: Նույն ամսին Հայկական գյուղատնտեսական ընկերության վարչության հանձնարարությամբ, Բաքվի Հայկական տնայնագործական ընկերությունը Վանի շրջանի գաղթականների համար ուղարկեց մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ (494 գերանդի, 504 եղան, 460 դույլ, 1500 երկաթյա բահ և 648 մանգաղ)[65] չնայած այն դժվարությանը, որ Բաքվի նահանգապետն արգելել էր գնված գյուղատնտեսական իրերը դուրս հանել քաղաքից: Այդ նույն ժամանակ Հայկական գյուղատնտեսական և Տնայնագործական ընկերությունը Թիֆլիսի մեծահարուստ հայ ռևանշիստական Լ. Հակոբջանովին պատվիրեց 12000 գերանդի ուղարկել Վանի շրջանի գաղթականների համար: Միաժամանակ նույն ընկերությունը դիմեց Թամամշևին, խնդրելով, որպեսզի միջոցներ ձեռք առնվեն հիշյալ գերանդիները չբռնագրվվելու ուղղությամբ[66]:

Վերաշինության հանձնաժողովը, որը Վանում կազմել էր իր մասնաճյուղը՝ հանձինս Վան գործուղված իր ներկայացուցիչներ Ս. Մալխասյանի և Մ. Մինասյանի, ինչպես նաև տեղացիներից՝ Ռ. Հովհաննիսյանի ու Կ. Կարախանյանի, լծկան և կթան անասուններ էր մատակարարում Արճակի և Ստորին Թիմարի գյուղացիներին: Անասունները գյուղացիներին բաժանվում էին խիստ մատչելի գներով կամ վերջիններիս արժեքը չորս տարում վճարելու պայմանով: Սերմացու հայթայթելու նպատակով հանձնաժողովը Ա. Տերմենից ստացել էր լրացուցիչ դրամական միջոցներ, որի շնորհիվ յուրաքանչյուր ընտանիքի սերմացու էր բաժանվում առավելագույն չափով (մոտ 16 փութ): Գյուղացիությանը տրվում էր նաև դրամ՝ սերմացու գնելու համար[67]:

Չնայած կազմակերպությունների եռանդուն գործունեությանը, այնուամենայնիվ, 1916 թ. գարնանացանը շատ անհաջող էր՝ շնորհիվ այն հանգամանքի, որ ժամանակին չէին հայթայթվել անհրաժեշտ քանակությամբ լծկան անասուններ: 1916 թ. մայիսին Վան-Վասպուրականում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար կային ընդամենը 3000 լծկան անասուններ, որից 1500-ը տեղացիների սեփականություն էր, 1000-ը ամերիկացի բարեգործների բաժանածը, իսկ 500-ը՝ հայկական ընկերությունների կողմից ձեռք բերվածը: Հաշվի առնելով այդ տխուր իրողությունը, կառավարությունը 500000 ռ. հատկացրեց գաղթականների գործով զբաղվող Հայկական կազմակերպությունների միությանը, որպեսզի վերջինս լծկան անասուններ, սերմացու և երկրագործական գործիքներ ձեռք

---

[63] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 32, ց. 1, գ. 15, թ. 75, և 61:
[64] Նույն տեղում, թ. 74:
[65] Նույն տեղում, թ. 77:
[66] Նույն տեղում:
[67] «Վան-Տոսպ», 1916 թ. մայիսի 22, № 26;

յերի Վանի գյուղացիության համար: 100000 ռ. էլ՝ միայն սերմացուի համար, դրվեց Նահանգապետի տրամադրության ներքո[68]:

1916 թ. մայիսի 28-ին Էջմիածնից Վան մեկնեց Սահակ արքեպիսկոպոսը՝ գյուղատնտեսական կարիքների համար իր հետ տանելով 25000 ռ. դրամ[69]:

Գյուղատնտեսական աշխատանքներին արդյունավետ օգնություն ցույց տալու նպատակով, գաղթականներին նպաստող Թիֆլիսի Հայկական ընկերությունների միությունը Վան ուղարկեց 100000 ռ. արժողության անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներ և երկրագործական այլ պարագաներ (1000 գութան, 5000 գերանդի, 1300 մանգաղ, մեծ քանակությամբ կացիններ ու բահեր): 150000 ռ. էլ հատկացվեց Պարսկաստանից (Ատրպատականից) լծկաններ և սերմացու գնելու համար[70]:

Վանի շրջանի հայ փախստականների համար սերմացու և լծկաններ գնելու նպատակով 1916 թ. մայիսին Պարսկաստան մեկնեց Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական ընկերության Վանի շրջանի լիազոր Ա. Թադևոսյանը: Նրան ուղեկցում էին հայ մեծահարուստ Լ. Մանթաշյանի կալվածների կառավարիչ Գ. Շահումովը և մի քանի հրահանգիչներ[71]: Մինչ այդ, նույն ընկերության հրահանգիչ Վ. Առաքելյանը Թավրիզից ուղարկած իր հեռագրում նշում էր, որ Պարսկաստանում հնարավորություն կար գնելու լծկաններ, գլուխը՝ 100 ռ., նույնպես և սերմացու ցորեն, փութը՝ 2 ռ. 20 կոպ. հաշվով: Չնայած կային դժվարություններ, այնուամենայնիվ, Վ. Առաքելյանը տեղեկացնում էր, որ գործի կանոնավոր կազմակերպության դեպքում հնարավոր կլիներ գնել բավականաչափ սերմացու և լծկաններ[72]:

1916 թ. հունիսին Պարսկաստան կատարած գործուղման ընթացքում Ա. Սահակյանի ղեկավարությամբ գնվեց 1600 գլուխ անասուն, որը Վան առաքվեց նույն ամսվա վերջերին: Անասուններ գնելու կապակցությամբ Պարսկաստան մեկնած մեկ այլ ուրիշ՝ Նպաստամատույց ընկերության լիազոր Գ. Վարդանյանի միջոցով ևս հունիս-հուլիսին Խոյից Վան ուղարկվեցին մեծ քանակությամբ անասուններ (926 գլուխ եզ, 19 կով, 36 գոմեշ, և 12 հորթ): 1916 թ. հուլիսին Պարսկաստանից վերադարձավ Հայկական գյուղատնտեսական ընկերության լիազոր Ա. Թադևոսյանը: Չնայած աննըպաստ մի շարք հանգամանքների՝ (ռուբլու ընկած կուրսը, անասունների «դաբաղ» հիվանդությունը), շուրջ երկու ամսվա ընթացքում (մայիսի 10-ից մինչև հուլիսի 10-ը), նրա ղեկավարած պատվիրակությունը ձեռնտու գներով Ատրպատականից ձեռք էր բերել 1970 գլուխ մեծատավար, իսկ Վանից՝ 444 գլուխ անասուն: Ընդամենը՝ 2414 գլուխ անասուն՝ 277038 ռ. արժողությամբ[73]:

1916 թ. հուլիսի 6-ին Հավթվանում կայացած խորհրդակցական մի ժողովի ժամանակ, որին մասնակցում էին լիազորներ Վ. Փափազյանը, Ա. Թադևոսյանը, Գ. Վարդանյանը և Ս. Տեր-Մկրտչյանը, միաձայն որոշվեց

---

68 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 5, և 19, նաև «Վան-Տոսպ», 1916 թ. հունիսի 5, № 28:

69 Նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 7:

70 «Վան-Տոսպ», 1916 թ. մայիսի 15, թ. 60:

71 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 32, ց. 1, գ. 15, թ. 60:

72 «Հորիզոն», 1916 թ. մայիսի 8, № 101:

73 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 3—4, անև «Մշակ», 1916 թ. հուլիսի 27, № 164:

շարունակել լծկանների գնումը թե՛ Պարսկաստանում և թե՛ Վանում և միաժամանակ ձեռնարկել 50000 փութ սերմացու գնելու գործը[74]:

Սակայն ոչ բոլոր դեպքերում էր հաջողվում անասուններ ձեռք բերել Պարսկաստանում: Այսպես, Հայկական գյուղատնտեսական ընկերության լիազորներ Հ. Համբարձումյանին, Ա. Մաքսապետյանին և Տ. Թերլեմեզյանին ամենևին էլ չհաջողվեց ոչ մի լծկան անասուն գնել Պարսկաստանից, որի հետևանքով նրանք ստիպված եղան այդ բացի լրացնել տեղում՝ ձեռք բերելով 110 գլուխ անասուն, 400 փութ սրմացու, 200 խոփ և 150 մանգաղ[75]:

Այսպիսով, գաղթականներին օգնող հայկական տարբեր ընկերությունների ներկայացուցիչներ Վան-Վասպուրականի գյուղատնտեսական աշխատանքները հաջող կազմակերպելու նպատակով փորձում էին ձեռք բերել մեծ քանակությամբ անասուններ՝ երկրում եղած պակասը լրացնելու համար:

Չկարողանալով լիովին հաղթահարել Վանի շրջանի գաղթականության պարենային ճգնաժամը, 1916 թ. մայիսին կառավարության կարգադրությամբ կասեցվեց ոչ վանեցիների գաղթը դեպի Վանի շրջան[76]: Այդ կարգադրության համար առիթ էր հանդիսացել այն պարագան, որ բազմաթիվ բիթլիսցիներ, մշեցիներ, սղերդցիներ և Արևմտյան Հայաստանի այլ վայրերի բնակիչներ մեկնում էին Վան և այնտեղ սպասելով իրենց ծննդավայր վերադառնալու արտոնությանը, սպառնում էին քաղաքի կենսամթերքների անբավարար պաշարի վերացմանը[77]:

Միաժամանակ հաշվի առնելով Վանի տնտեսական ճգնաժամը և տեղական բնակչության հայրենիք վերադառնալու ձգտումները, կառավարության թույլտվությամբ 1916 թ. մայիս-հունիս ամիսներին իրենց բնակության նախնական վայրերը վերադառնալու իրավունք ստացան Գավաշի հայերը, որոնք հաստատվեցին շրջանի մի շարք գյուղերում (Քարադաշտ, Պատականց, Ձիլի, Տրշող, Հաբբերդ, Փշավանց, Նոր-Գեղ, Դատվան, Մոխրաբերդ): Դրանք բացառապես տղամարդ գաղթականներ էին, որոնց թիվը չէր անցնում 700-ից: Հույները կտրած հայ նպաստատու ընկերությունների օժանդակությունից, գավաշցիները դիմելով ամերիկացի միսիոներ Գրեյսիի օգնությանը, շուտով իրենց թվին համապատասխան ստացան անհրաժեշտ քանակությամբ անասուններ և սերմացու:

Գավաշի շրջանում հաստատվեցին նաև շուրջ 230 կառկառցիներ, որոնք բնակվում էին այդ գավառի երբեմնի քրդաբնակ գյուղերում (Բողոնիս, Վիկունիս, Իշկերտ, Սարե, Վարանդանց): Վերջիններիս Գյուղատնտեսական ընկերությունը բաժանեց մի քանի տասնյակի հասնող լծկաններ:

Աննախանձելի դրության մեջ էին գտնվում Վանում հաստատված 4100 մոկսեցիները, շատախցիները և նորդուզցիները, որոնց սկզբից ի վեր արգելված էր վերաբնակությունը[78]: Այդ է պատճառը, որ կարոտյալների խողոքի ճնշման ներքո կազմվեց 3 հոգուց բաղկացած մի հանձնախումբ, որը ձեռնամուխ եղավ նպաստ բաժանել իրենց բնակության նախնական

---

[74] Նույն տեղում:

[75] «Արմենիա», 1916 թ. հուլիսի 12, № 50:

[76] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 70, ց. 1, գ. 436, թ. 121, նաև ֆ. 50, ց. 1, գ. 48, թ. 202, ЦГИА РГр., ф. 520, оп. 1, д. 34, лл. 4—5.

[77] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 48, թ. 202:

[78] «Երիտասարդ Հայաստան», 1916 թ. հոկտեմբերի 28, № 25;

վայրերը վերադառնալու անկարող Շատախի, Նորդուզի, Կարկառի, Մոկսի, Խիզանի և Բաղեշի բնակիչներին:

Վիճակագրական տվյալների համաձայն հունիսին Վասպուրականում ապրում էին 20000 հայեր, որոնց մեծամասնությունը խիզանցի, շատախցի, կարճկանցի և բիթլիսցի գյուղացիներ էին: Տեղաբնիկների թիվը չէր անցնում 1500-ից: Առավել վատթար վիճակում էին գտնվում քաղաքաբնակ գաղթականները:

Շարունակելով վերակառուցման աշխատանքները, Վասպուրականի 30 հազար դեսյատին հողերի մշակման համար կովալևսկյան հանձնաժողովի պարենային խորհրդակցությունը 1916 թ. հուլիսի 1-ին որոշում ընդունեց անմիջապես Կովկասի փոխարքայի տրամադրության տակ դնել 700 հազար ռ.: Սակայն հաստատեց մի նախապայման, ըստ որի փոխատվությունը պիտի վերադարձվեր փողով՝ երեք տարվա ընթացքում[79]: 1916 թ. հուլիսի 6-ին Կովկասյան ճակատի գլխավոր լիազոր Թամամշևը կայսրին ուղղած իր զեկուցագրում հայտնում էր, որ գրավված շրջանների և հատկապես Վանի նահանգի կարիքները բավարարելու համար իր տրամադրության տակ էր դրված 700 հազար ռ.: Երեք հասարակական կազմակերպությունների (Հայկական գյուղատնտեսական, Նպաստամատույց և Կովկասի հայոց բարեգործական ընկերությունների) օգնությամբ ոչ բարձր գներով ձեռք էր բերվել համապատասխան քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ (1000 գերանդի, 7000 փութ երկաթյա իրեր), ցորեն, լծկան անասուններ (մոտ 3000 գլուխ), ապահովվել էր մոտ 10 հազար դեսյատին հողերի աշնանացանը[80]:

Միաժամանակ Հայոց գյուղատնտեսական ընկերության նախագահ Ա. Սահակյանը 1916 թ. հուլիսին փախստականների գործի գլխավոր լիազոր գեներալ-մայոր Թամամշևին Վանից ուղարկած իր հեռագրում հայտնում էր, որ ցանքը Վանի շրջանում կատարվում էր հրահանգիչների հսկողությամբ, և որ Բերկրիում, Թիմարում, Հայոց Ձորում, Գավաշում, Կարճկանում և Արճակում գյուղացիներին բաժանվել էին անասուններ (2250 լծկան և 150 կով), գյուղատնտեսական գործիքներ (468 գութան և 3000 գերանդի) և սերմացու (մշակվել էր 2400 դեսյատին հողատարածություն): Ա. Սահակյանը Թամամշևից պահանջում էր 150000 ռ.՝ գաղթականների համար հետագայում անասուններ, սերմացու և գյուղատնտեսական գործիքներ գնելու և 50000 ռ. էլ՝ փոխադրական միջոցների ընդարձակման ու 10000 դեսյատին հողատարածությունների մշակման համար[81]: Հաշվի առնելով Ա. Սահակյանի պահանջների հրատապությունը, գեներալ-մայոր Թամամշևը վերջինիս է ուղարկում 150000 ռ.՝ սերմացու և լծկաններ գնելու նպատակով[82]:

Գյուղատնտեսության անմխիթար վիճակը նահանգում բացասաբար էր անդրադառնում արհեստի և առևտրի զարգացման վրա: Գործի հաջողությանը արգելք էր հանդիսանում նաև դրամագլխի և գործիքների պակասությունը: Այդ էր պատճառը, որ միսիոներները ձեռնամուխ եղան քաղաքի արհեստավորների ու առևտրականների օգնության գործի կազմակերպմանը, որը սակայն կրում էր անկանոն բնույթ: Սկզբում օժանդակում

---

79 «Հորիզոն», 1916 թ. հուլիսի 31, № 169:

80 ЦГИА РГр., ф. 520, оп. 1, д. 41, л. 20.

81 «Հորիզոն», 1916 թ. հուլիսի 13, № 154, նաև «Армяне и война», 1916 г., август, № 6.

82 «Հորիզոն», 1916 թ. հուլիսի 24, № 163:

էին 100-ական ռուբլով, բայց հետագայում, երբ խնդրատուների թիվը հասավ 700-ի, նրանք 100-ական ռուբլու օժանդակությունն իջեցրին 50—60-ական ռ., իսկ շուտով դադարեցրին նույնիսկ օգնություն ցույց տալը: Թեև 50—100 ռ. օժանդակությունն անարժեք մի գումար էր արհեստավորների և առևտրականների անհրաժեշտ կարիքները բավարարելու առումով, բայց այնուամենայնիվ, Վասպուրականի համար ծանր այդ օրերին, այն իր համապատասխան ավանդն ուներ երկրի վերաշինության ընդհանուր գործում:

Չնայած հասարակական և բարեգործական բոլոր կազմակերպությունների և կառավարության գործադրած բոլոր ջանքերին, Վան-Վասպուրականի վիճակը մնում էր անհուսալի: Սովի ուրվականը շրջում էր երկրի բոլոր գավառներում: 100-ից միայն 4—5 տոկոսն էր, որ կարողացել էր զանազան միջոցներով ձեռք բերել մի քանի ամիս բավականացնող հացի անհրաժեշտ պաշարներ: Զգացնել էր տալիս գյուղատնտեսական գործիքների, անասունների և սերմացուի պակասությունը:

Լայն աշխատանք էր տարվում քրդերի և թուրքերի մոտ պահված երեխաներին փրկելու ուղղությամբ: Ա. Տերմենը 1916 թ. հունվարի 5-ին «Մշակ»-ի խմբագիր Հ. Առաքելյանին գրած իր նամակում նշում էր, որ «քրդերին ես հայտնեցի, որ նրանք բերեն ինձ բոլոր հայ որբերին, որոնք մնացել են իրենց գյուղերում և եթե նրանք որբերին բերեն մինչև մեկ ամիս, ամեն մի որբի համար կստանան ինձնից 10 ռուբլի, իսկ եթե ես հետո գտնեմ հայեր նրանց գյուղերում, թաքցնող տնատերերը խիստ պատասխանատվության կենթարկվեն և գյուղը կտուգանվի 1000 ռ.՝ ամեն մի հայի կամ հայուհու համար»[83]: Ա. Աթանեսյանը գովասանքով է խոսում Ա. Տերմենի մասին, որը թաղից թաղ շրջելով անձամբ հավաքում էր որբ երեխաներին:

1915 թ. դեկտեմբերի 23-ին ժամանելով Վան, Քաղաքների միության բժշկապարենային ջոկատը, երկու օր անց, բողոքականների նորակառույց դպրոցի շենքում բացեց մի որբանոց, որտեղ հավաքվեցին մոտ 70 որբեր[84]: Որբերի ընդհանուր վիճակը բարվոքելու նպատակով Վանի Երկրապահ գունդը կազմեց երեք հոգուց բաղկացած մի հանձնախումբ (Ա. Համբարյան, Ն. Դշխոյան, Ա. Միրաքյան), որն իր գործունեությունը շարունակեց մինչև բժիշկ Բաբալյանի Վան ժամանելը, որը գալով Վան, առանց նախապես որբանոցի հանձնախմբի հետ բանակցելու, որբերին տեղափոխեց Կովկաս[85]:

Տնտեսական ընդհանուր քայքայվածության նկարագրի հետ միասին մեծ չափերի էին հասել բարքերի խաթարումը, այլասերումը և բարոյական այլանդակությունը: Քաղաքական անակնկալները մեծ հարված էին հասցրել ժողովրդի բարոյա-կրոնական ոգուն: Այրիացած կանանց դրությունը, անոթության ճիրանների մեջ գալարվելը, քրդերի և թուրքերի մոտ մնացածների խոշտանգումները, միևնույն ժամանակ հազարավոր տղամարդկանց ներկայությունը այլանդակ և անհանդուրժելի կացություն էին ստեղծել Վանում: Թուլացել էր բարոյական ընդհանուր կապը: Ս. Գորոդեցկին „Русское слово“ պարբերականի № 175-ում տպագրված «Ավերված դրախտ» հոդվածում գրում էր ,որ «...Վանի փախստականները ծույլ են,

[83] «Ազգ», 1916 թ. ապրիլի 1, № 77, նաև «Վան-Տոսպ», 1916 թ. փետրվարի 7, № 11;
[84] «Մշակ», 1916 թ. հունվարի 23, № 15:
[85] «Վան-Տոսպ», 1916 թ. հունվարի 31, № 10;

կեղտոտ և անզգա: Դժվար է ստիպել նրանց, որ սրբեն իրենց սպասարանների հատակը: Հացի մի կտոր և անասնական հանգիստ՝ սա ամեն ինչ է, որ հարկավոր է նրանց: Ամբողջ ժամերով անշարժ կարող են պառկել մի տեղ: Երբ նրանց գործի են դնում, նրանք աշխատում են դանդաղ և անտարբեր: Պետք է հարություն տալ նրանց: Պետք է նորից ստիպել նրանց հավատալու, որ երկրի վրա կարելի է ապրել, որ աշխատանքի պտուղները չեն ոչնչացվի մի ակնթարթում, որ կյանքը և պատիվը չեն խլվի նրանցից... Փախստականները ամենից շատ կարիք են զգում հոգեկան կյանքի վերաշինության... Չի կարելի փախստականի համար կով առնել և բաց թողնել այնպես: Փախստականը կծախի այն: Նա արդեն գտնվում է ունայնության մրրիկի մեջ, նա պոկված է կյանքից և դուրս է նրանից: Նրան չի կարելի կյանքի դարձնել միայն նյութական օգնությամբ: Ոգին կյանք է ստանում միայն ոգուց...»:

Վերաշինման ժամանակաշրջանում առանձնապես ծանր էր ժողովրդի կառավարման գործը և որ այդ դժվարությունն անհաղթահարելի էր դառնում զինվորական դրության շնորհիվ: Այստեղ որևէ հաստատուն կարգի և օրենքի մասին բնավ խոսք լինել չէր կարող, որովհետև ամեն ինչ կախված էր պաշտոնյաների անհատական վերաբերմունքից և քմահաճույքից:

ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու